ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2014 թվականի մայիսի 19-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ

Հոդված 19. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց առաջխաղացման ցուցակը
(վերնագիրը փոփ. 09.12.20 ՀՕ-494-Ն)

1. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց առաջխաղացման ցուցակը ձևավորում է որակավորման հանձնաժողովը՝

1) քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց հերթական ատեստացիայի ժամանակ.

2) արտահերթ կարգով, երբ քննչական կոմիտեի նախագահը կամ նրա տեղակալն առաջարկություն է ներկայացնում որակավորման հանձնաժողով՝ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ որպես խրախուսում նրան առաջխաղացման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ՝ ներկայացնելով համապատասխան ծառայողական բնութագիր: Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձն ընդգրկվում է ծառայողական առաջխաղացման ցուցակում որակավորման հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում.

3) այն դեպքերում, երբ որակավորման հանձնաժողովը որոշում է կայացնում արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից ազատված անձին միաժամանակ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկելու վերաբերյալ:

1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձինք որակավորման հանձնաժողովի կողմից ծանուցում ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, էլեկտրոնային համակարգում լրացնում են բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկ, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձինք որակավորման հանձնաժողովի կողմից ծանուցում ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, որակավորման հանձնաժողով են ներկայացնում բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկ:

1.2. Սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված ժամկետի ավարտից հետո՝ մեկօրյա ժամկետում, որակավորման հանձնաժողովն առաջխաղացման ենթակա անձանց կողմից բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը լրացված լինելու մասին տեղեկացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:

1.3. Ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկվելու վերաբերյալ եզրակացությունը տրամադրելիս որակավորման հանձնաժողովի կողմից գնահատման ենթակա հանգամանքներից է նաև թեկնածուի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը :

2. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկվում է հինգ տարի ժամկետով:

3. Որակավորման հանձնաժողովի կողմից սույն հոդվածի 1.3-րդ մասով նախատեսված եզրակացությունը տրամադրելուց հետո՝ եռօրյա ժամկետում քննչական կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվում է առաջխաղացման ենթակա անձի՝ բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացության եզրափակիչ մասը: Անձի կողմից եզրակացության վերաբերյալ գրավոր առարկություններ ներկայացված լինելու և թեկնածուի գրավոր համաձայնության դեպքում՝ հրապարակվում են նաև այդ առարկությունները:

(19-րդ հոդվածը փոփ., լրաց. 09.12.20 ՀՕ-494-Ն, լրաց. 11.04.24 ՀՕ-161-Ն)

(09.12.20 ՀՕ-494-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

(11.04.24 ՀՕ-161-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)

Հոդված 20. Քննչական կոմիտեում պաշտոնի նշանակելը և պաշտոնից ազատելը

1. Քննչական կոմիտեի նախագահին նշանակում է Կառավարությունը Հայաստանի Հանրապետության վարչապետի ներկայացմամբ՝ վեց տարի ժամկետով:

1.1. Քննչական կոմիտեի նախագահի պաշտոնում նշանակում կատարելու վերաբերյալ կառավարության որոշման հետ միաժամանակ քննչական կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվում է նշանակված անձի բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացության եզրափակիչ մասը: Անձի կողմից եզրակացության վերաբերյալ գրավոր առարկություններ ներկայացված լինելու և թեկնածուի գրավոր համաձայնության դեպքում՝ հրապարակվում են նաև այդ առարկությունները:

2. Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել քննչական կոմիտեի նախագահի պաշտոնում:

3. Քննչական կոմիտեի նախագահի պաշտոնավարման ժամկետը չի կարող գերազանցել սույն օրենքով սահմանված պաշտոնավարման սահմանային տարիքը՝ անկախ վերանշանակման հանգամանքից, բացառությամբ սույն օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքի:

4. Քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին քննչական կոմիտեի նախագահի ներկայացմամբ նշանակում է վարչապետը: Քննչական կոմիտեի նախագահի տեղակալի պաշտոնում նշանակում կատարելու վերաբերյալ վարչապետի որոշման հետ միաժամանակ քննչական կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվում է նշանակված անձի բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացության եզրափակիչ մասը: Անձի կողմից եզրակացության վերաբերյալ գրավոր առարկություններ ներկայացված լինելու և թեկնածուի գրավոր համաձայնության դեպքում՝ հրապարակվում են նաև այդ առարկությունները:

~~4. Քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին քննչական կոմիտեի նախագահի ներկայացմամբ նշանակում է վարչապետը:~~

4.1. Մինչև վարչապետի կողմից քննչական կոմիտեի նախագահի թեկնածուին Կառավարություն ներկայացնելը՝ վարչապետի աշխատակազմը, իսկ մինչև քննչական կոմիտեի նախագահի տեղակալների թեկնածուներին քննչական կոմիտեի նախագահի կողմից վարչապետին ներկայացնելը քննչական կոմիտեի նախագահը թեկնածուների կողմից լրացված բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկները ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով քսանօրյա ժամկետում խորհրդատվական բնույթի եզրակացություն ստանալու նպատակով:

4.2. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը քննչական կոմիտեի նախագահի թեկնածուի բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացությունը տրամադրում է վարչապետին, իսկ քննչական կոմիտեի նախագահի տեղակալների թեկնածուների բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացությունը՝ քննչական կոմիտեի նախագահին:

4.3. Վարչապետի կողմից քննչական կոմիտեի նախագահի թեկնածուին Կառավարություն ներկայացնելու, իսկ քննչական կոմիտեի նախագահի տեղակալների թեկնածուներին քննչական կոմիտեի նախագահի կողմից վարչապետին ներկայացնելու հետ մեկտեղ ներկայացվում են նաև թեկնածուների լրացրած բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկները և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ բարեվարքության ուսումնասիրության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունները:

5. Կառավարությունը և վարչապետը համապատասխանաբար քննչական կոմիտեի նախագահին և նրա տեղակալներին պաշտոնից ազատում է սույն օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված հիմքերով:

6. Քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչությունների, վարչությունների և բաժինների, զինվորական քննչական գլխավոր վարչության վարչությունների, բաժինների և կայազորային քննչական բաժինների, Երևան քաղաքի քննչական վարչության, Երևան քաղաքի վարչական շրջանների քննչական բաժինների, մարզային քննչական վարչությունների բաժինների կազմում գործող քննիչներին պաշտոնի է նշանակում քննչական կոմիտեի նախագահը քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում ընդգրկված այն անձանց թվից, որոնք, ավարտելով ուսումնառությունը արդարադատության ակադեմիայում, հաջողությամբ հանձնել են որակավորման քննությունը կամ սույն օրենքով սահմանված կարգով ազատված են եղել արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից: Պաշտոնի նշանակվելու դեպքում անձը քննչական կոմիտեի նախագահի կողմից հանվում է քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակից:

7. Քննչական կոմիտեի մյուս ծառայողներին նշանակում է քննչական կոմիտեի նախագահը՝ քննչական կոմիտեում ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկված անձանց թվից: Պաշտոնի նշանակվելու դեպքում անձը քննչական կոմիտեի նախագահի կողմից հանվում է քննչական կոմիտեում ծառայողական առաջխաղացման ցուցակից:

7.1. Սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված կարգով քննչական կոմիտեի նախագահի կողմից որոշում կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում քննչական կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվում

է նշանակված անձի բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացության եզրափակիչ մասը: Անձի կողմից եզրակացության վերաբերյալ գրավոր առարկություններ ներկայացված լինելու և թեկնածուի գրավոր համաձայնության դեպքում՝ հրապարակվում են նաև այդ առարկությունները:

8. Քննչական կոմիտեի նախագահը սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերում նշված քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնից ազատում է սույն օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված հիմքերով:

(20-րդ հոդվածը փոփ. 17.01.18 ՀՕ-79-Ն, 23.03.18 ՀՕ-311-Ն, 09.12.20 ՀՕ-494-Ն, լրաց. 11.04.24 ՀՕ-161-Ն)

(09.12.20 ՀՕ-494-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

(11.04.24 ՀՕ-161-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)